ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 սեպտեմբերի 2025 թվականի N 913-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի թիվ 13-Ն հրամանով.

Որոշում եմ՝

1. 2025 թվականի հոկտեմբերի 27-ին ժամը՝ 11:00-ին նշանակել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի /ծածկագիր 3.1-28/ թափուր պաշտոնի մրցույթ:

2.2025 թվականի հոկտեմբերի 27-ին ժամը՝ 12:30-ին նշանակել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական, սոցիալական աջակցության և առողջապահության հարցերի բաժնի առաջատար մասնագետի /ծածկագիր 3.1 - 20/ թափուր պաշտոնի մրցույթ:

3. 2025 թվականի հոկտեմբերիի 27-ին ժամը՝ 14:00-ին նշանակել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետի /ծածկագիր 2.3-21/ թափուր պաշտոնի մրցույթ:

4.2025 թվականի հոկտեմբերի 27-ին ժամը՝ 15:30-ին նշանակել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի

կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի առաջատար մասնագետի /ծածկագիր 3.1-23/ թափուր պաշտոնի մրցույթ:

5. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին /Գ. Շառոյանին/, ապահովել համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթների հայտարարության հրապարակումը:

6. Սույն որոշումն ընդունելուց հետո երկօրյա ժամկետում համայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի մասին պատշաճ տեղեկացնել ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմին:

7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Լ.ՅԱՅԼՈՅԱՆ**

2025թ. սեպտեմբերի 26
Խոյ համայնք, գ. Գեղակերտ